մաբ տարէք նրան և ցոյց տուէք թէկուզ Թիֆլիզ հայաբնակ քաղաքի փառաւոր եկեղեցիներն ու բազմաթիւ դպրոցները, հոյակապ տներն ու թանկագին ապրանքներով լիքը մեծամեծ խանութները, որոնք ամեն մի չտես Հայ գիւղացու ախորժակն են գրգռում, աչքերն են շլացնում և նրա սիրտն ու հոգին են գրաւում։ Այն ինչ հայրենասէր Ուտիացի Հայը այս ամենը տեսնելով, հաւանում է միայն փառաւոր եկեղեցիները, բազմաթիւ դպրոցները և ընտիր նժոյգ ձիերը։ Բայց մի ամիս Թիֆլիզում ապրել նա չի ուզի, եթէ մինչև անգամ Թիֆ. բոլոր ճոխութիւնն ու հարստութիւնը իրեն նուիրելու լինիք։ Նա գոհ սրբատանց մէջ քաշելով, իւր սրտի խորհուրդն ու տենչանքը կասէ ձեզ այսպէս. «Ա՜խ, երանի այս քարաշէն տներն ու եկեղեցիները, այսքան գեղեցիկ դպրոցները շինուած լինէին մեր գիւղում, հէնց մեր այգու շագանակի ծառի մօտ, որ անխիղճ և անօրէն Թուրքերը չկարողանային այրել ու կողոպտել նրանց, որ մեր գիւղացի հայն էլ կարողանար կարգին եկեղեցի ունենալ և իւր զաւակներին կրթել տալ այս հրաշալի դպրոցների լուսաւոր յարկի տակ։ Ա՜խ, երանի թէ այս սիրուն և ամեհի նժոյգները լինէին մեր գիւղերում, որ հեծնէինք նրանց վրայ և գնայինք ս. Եղիշէի առաքելոյ վանքը ուխտի և կամ Մուղանի անապատը՝ կուր գետի ափերին առատութեամբ վայրենի խոզեր ու եղջերուներ որսայինք»։ Ինչպէս ասացի, Ուտիացին չափազանց համբերող ու չարքաշ է, բայց երբոր իւր համբերութիւնը անց-